# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

"24" հունվարի 2011թ. №5-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՇՈՒՌՆՈՒԽ, ԿԱՂՆՈՒՏ, ԼՈՐ, ՆՈՐ ԱՍՏՂԱԲԵՐԴ, ՍԻՍԻԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՈՐՈՏԱՆ ԵՎ ԳՈՐԻՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՈՐՈՏԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով, **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Շուռնուխ գյուղական համայնքում՝ համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու, Կաղնուտ, Լոր, Գորիսի տարածաշրջանի Որոտան գյուղական համայնքներում՝ համայնքի ղեկավարի, իսկ Նոր Աստղաբերդ և Սիսիանի տարածաշրջանի Որոտան գյուղական համայնքներում՝ համայնքի ավագանու հերթական ընտրությունների օր նշանակել 2011 թվականի մարտի 20-ը:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված համայնքների նորընտիր տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ստանձնման օր սահմանել 2011 թվականի ապրիլի 25-ը:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2010թ. հունվարի 24
ք. Կապան